կաւաթիւ, նախ քան զերրորդ դաղթականութիւնը չինած են այս եկեղեցիս, թէպէտ և չունենամ յայսմ մասին գրաւոր ապացոյց մի։ Ճանչնալով զՀայս և նոցա խիստ կրօնական սկզբունքը, չեմք կրնար համաձայնիլ, որ նոքա տեղւոյ մի վրայ հարիւր տարի բնակելով՝ չունենան իրենց աղօթատեղին, մինչդեռ այլ տեղուանք նոցա փոքրախումբ ժողովրդոց, ինչպէս Ղրիմու թերակղզւոյն մէջ կամ Կովկասու սարերուն վրայ՝ առաջին շինութիւնքը՝ եկեղիցիք են։ Հուսկ ապա եկեղեցւոյս ճարտարապետական ոճը՝ որոշ և յայտնի ապացոյց մի է նորա խորին հնութեան[1]։

Զուտձև է չէնքն, ճակատը վերուստ 'ի վայր ուղղաբերձ հատած. ստուար պատերն անարդիլ յենարաններ ունի, լուսամուտներն սակաւաթիւ, երկու կողմէն մի հատ, փոքրագիր և անմիջապէս կից կամարին, որք աւելի բերդերու որմնածերպի՝ քան պատուհանի ձև ունին։ Ի միջավայրի է եկեղեցիս, նորա չորս պտոյտը կան գերեզմանաքարինք, որոց շուրջը որմած։ Եկեղեցւոյս շինողաց միտքը յայտնի կը ցուցընէ այդ որմածը. զի նոքա պէտք ժամանակին՝նախատես եղած են՝ աղօթից նուիրեալ անկիւնս'ի բերդ փոխարկելու՝ ուր կարելի լինի պաշտպանուիլ, պատերազմի իրաց անտեղեակ, յարձակող թշնամւոյն դէմ. դարձեալ այդ եօթնկանգնեան պարիսպն արգելք է թշնամւոյն, որ չի տեսնար ինչ կը լինի պարսպապատին մէջ։ Բարձրաբերձ զանգակատան պակասութիւնը՝ ցոյց է այն ստոր-

1. Թէոդոսիա քաղաքին արգելանոցին մէջ գտնուած Հայոց դատարկ եկեղեցիներուն և այս եկեղեցւոյս շինութեան ոճոյն մէջ՝ շատ մերձաւոր նմանութիւն կը նշմարուի։